ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Ասատուր Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**
   ՀՀ ՏԿԵՆ նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, քաղաք Լոնդոն, 2025 թվականի դեկտեմբերի 1-ից դեկտեմբերի 4-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   «Resourcing Tomorrow / Mines and Money» ծրագրերի բաժնի տնօրեն Էնդրյու Թեյք

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

Գործուղման հիմնական նպատակը «Resourcing Tomorrow» խորագրով միջազգային հանքարդյունաբերական համաժողովին մասնակցելն էր:

Համաժողովի նպատակն էր միավորել հանքարդյունաբերության, էներգետիկայի, բնապահպանական կառավարման, ինչպես նաև պետական, մասնավոր և գիտական հաստատությունների ներկայացուցիչներին՝ քննարկելու կայուն զարգացման, պատասխանատու հանքարդյունաբերության, բնապահպանական ռիսկերի նվազեցման և բնական ռեսուրսների արդյունավետ կառավարման արդիական մարտահրավերներն ու լուծումները:

Մասնակցությունը հնարավորություն տվեց.

- ծանոթանալ միջազգային քաղաքականություններին և միտումներին,
- ուսումնասիրել ոլորտում ներդրվող նորագույն տեխնոլոգիաներն ու մոտեցումները,
- ստեղծել համագործակցության նոր հնարավորություններ և հաստատել մասնագիտական կապեր,
- ծանոթանալ հանքարդյունաբերական ոլորտի կայունության բարձրացման լավագույն փորձին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

«Resourcing Tomorrow» միջազգային հանքարդյունաբերական համաժողովի ընթացքում քննարկվել են հանքարդյունաբերության ոլորտի արդիական մարտահրավերներն ու զարգացման ուղղությունները: Մասնակցել եմ ինչպես կառավարական, այնպես էլ թեմատիկ կլոր-սեղան քննարկումների, որոնք վերաբերում էին կարևոր հանքանյութերի շուկայի կայունությանը, մարտկոցներում օգտագործվող մետաղներին, դրանց մատակարարման շղթային, ԱԲ-ի և նորարարական ֆինանսավորման գործիքների կիրառմամբ հետախուզական աշխատանքներին, ինչպես նաև աշխարհաքաղաքական փոփոխությունների ազդեցությանը հանքային ռեսուրսների վրա:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Այցի ընթացքում ՏԿԵՆ նախարարի հետ հանդիպում ենք ունեցել ԱՄՆ պետական դեպարտամենտի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով Եվրոպայի, Եվրասիայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի ԱՄՆ աջակցության ժամանակավոր համակարգող Քիրսթեն Սելինջերի հետ, ում հետ քննարկել ենք փոքր մոդուլյար ռեակտորների (SMR) կիրառման հնարավորությունը Հայաստանում: Ամերիկյան կողմը ներկայացրեց Միացյալ Նահանգների փորձը այս ոլորտում, տեխնոլոգիական լուծումները և հնարավոր համագործակցության առաջարկները:

Քննարկման ընթացքում անդրադարձանք նաև երկրաբանական ծառայությունների ստեղծման ուղղությամբ Հայաստանի ծրագրերին, ինչպես նաև ԱՄՆ Երկրաբանական ծառայության հետ համագործակցության հնարավորություններին՝ մասնագիտական աջակցության, հզորությունների զարգացման և տվյալների կառավարման բարելավման հարցերին:

Բացի այդ, քննարկեցինք արևային էներգետիկայի զարգացման միտումները, այս ոլորտում առկա հզորությունները և ԱՄՆ հնարավոր աջակցության ու փորձի կիրառման ուղղությունները:

Հանդիպել ենք նաև Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ICMM) նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն Ռոհիտեշ Դհավանի հետ, անդրադարձ ենք կատարել հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման միջազգային չափանիշների ներդրման, բնապահպանական ռիսկերի նվազեցման, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցերին՝ որպես ներդրողների վստահությունը ամրապնդող և նոր ներդրումներ ներգրավող կարևոր պայմանների:

SLR Consulting ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկեցինք հանքարդյունաբերության ոլորտում միջազգային չափանիշների կիրառման հնարավորությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման մեթոդներին, թափոնների կառավարման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և

կլիմայական ռիսկերի նվազեցման մոտեցումներին: Անդրադարձ կատարեցինք նաև թափանցիկության բարձրացման և ESG չափանիշների ներդրման կարևորությանը:

Միացյալ Թագավորության արտաքին գործերի գրասենյակի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վարչության պետի տեղակալ Մարկ Քլեյթոնի հետ հանդիպմանը անդրադարձանք TRIPP-ի, Խաղաղության խաչմերուկի հետ կապված և ընդհանուր խաղաղությանը վերաբերող հարցերին: Ներկայացրինք Հայաստանի հանքարդյունաբերության հնարավորությունները և ոլորտում ներդրումային ու համագործակցության առկա հեռանկարները:

Այցելել ենք նաև Լոնդոնի մետաղների բորսա և հանդիպել կորպորատիվ վաճառքի ղեկավար Քրիստիան Միլդների հետ: Հանդիպման ընթացքում զրուցակցիս կողմից ներկայացվել է բորսայում ընկերությունների ցուցադրման ընթացակարգը, քննարկվել, թե ինչ պահանջների պետք է համապատասխանեն ընկերությունները բորսայում ցուցարկվելու համար: Շրջայց ենք կատարել բորսայի շենքում, ծանոթացել գործառնական գործընթացներին և բորսայի կառավարման համակարգին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել փոխհամագործակցության ամրապնդման վերաբերյալ նախնական պայմանավորվածություններ և քննարկվել երկկողմ շփումների շարունակականության ապահովման հնարավորությունները: Այցի ընթացքում որևէ փաստաթուղթ կամ համաձայնագիր չի ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակտիվացնել միջազգային գործընկերների հետ համագործակցությունը՝ փորձի փոխանակման, տեխնոլոգիական և ներդրումային նոր հնարավորությունների բացահայտման նպատակով:

10. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Ասատուր Վարդանյան
10.12.2025թ.